ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՈՐ ՔԱՂԱՔ-ԿԱՅՆԵՊՈԼԻՍ-ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Հայաստանում հելլենիստական մշակույթի ավանդույթները շարունակվել են նաեւ ուշ անտիկ շրջանում: Հռանդեայի հռոմեապարթեւական համաձայնագրի կնքվելուց հետո (63 թ.) Տրդատ Արշակունին ճանաչվեց Մեծ Հայքի թագավոր եւ թագադրվեց Հռոմում: 66 թ.-ին վերադարձավ եւ վերականգնեց ավերված մայրաքաղաք Արտաշատը, Գառնի ամրոցի պարիսպները, կյանքի կոչեց պալատական համակառույցը՝ տաճարը: Կեսդարյա խաղաղությունը Հռոմեական կայսրության եւ Արեւելքի միջեւ, առեւտրի ծաղկումը նպաստեցին նաեւ վերջիններիս աշխուժացմանն ու վերելքին Հայաստանում: Այս ամենը հնարավորություն ընձեռեց վերականգնել, շենացնել Հայաստան աշխարհը: Երկրորդ դարի սկզբին հայկական գահի շուրջ հռոմեապարթեւական հարաբերությունները կրկին սրվեցին: Տրայանոսը 114 թ. Սատաղ-Արտաշատ ճանապարհով մտավ Հայաստան եւ այն հայտարարեց պրովինցիա: Կառավարիչ նշանակելով Կատիլիուս Սեւերոսին եւ Արտաշատ մայրաքաղաքում կայազոր թողնելով՝ շարժվեց հարավ: Նա քաղաքում եւ քաղաքից դուրս զբաղվել է շինարարությամբ: Հայաստանի Հանրապետության Փոքր Վեդի բնակավայրի հարավային ծայրում հայտնաբերված՝ Տրայանոսի 116թ. լատիներեն մեծ արձանագրության եւ շիրմաքարի վրա եղած արձանագրություններից տեղեկանում ենք, որ այստեղ կանգնած են եղել սկյութական IV լեգեոնը եւ իտալիկների առաջին զորաջոկատը[1]: Սկյութական IV լեգեոնը Արտաշատի հյուսիսարեւելյան մասում՝ քաղաքից դուրս, իրականացրել է ինչոր կառույցի շինարարություն, (ակներեւաբար, ամրություն, «կաստել»): Արձանագրությունն ագուցված է եղել որմի մեջ: Դիոն Կասսիոսը հաղորդում է,

1 Տեն **Բ. Առաքելյան**, Լատիներեն արձանագրություններ Արտաշատ մայրաքաղաքից, Պատմաբանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), 1967, թ. 4, էջ 307: *Մեր նպատակն է ճշտել Վաղարշապատի հիմնադրման ժամանակը:*

որ «Տրայանոսը, բոլոր հարմար վայրերում պահակազորեր թողնելով, եկավ Եդեսիա...»[2]:

Վերջինս Հռոմ վերադառնալիս 117 թ. օգոստոսին Կիլիկիայում վախճանվեց: Հռոմեական զորքերը հեռացան Հայաստանից:

Տրայանոսի հաջորդը՝ Հադրիանոսը (117-138 թթ.), հրաժարվեց Տրայանոսի նվաճումներից: Հռոմեացիների եւ պարթեւների միջեւ կրկին վերականգնվեց հավասարակշռությունը: Այս առիթով Էլիոս Սպարտիանն ասում է, որ Հադրիանոսը «թույլ տվեց, որ հայերն ունենան թագավոր, մինչդեռ Տրայանոսի ժամանակ նրանք ունեցել են տեղապահ»[3]: Հայաստանում վերստին գահակալեց Վաղարշ Առաջինը (117-140/143թթ.)[4]: Մովսես Խորենացին այդ առիթով գրում է. «Սա պատեաց պարսպաւ եւ զիզօր աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասախ գետոյ. զորմէ յառասպելսն ասեն «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով, եկեալ նստաւ զՇրէշ բլրով, զԱրտիմէդ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի»: Հիշատակվողը Երուանդ Առաջին Սակաւակեացն է, որ «ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս. յորում եւ Տիգրան միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեանն Հրէից. որ եղեւ քաղաքագիւղ վաճառօք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ եւ հզօր պատուարաւ, եւ անուանեաց Վաղարշապատ, որ եւ Նոր քաղաք»[5]: Հենվելով այս հաղորդման վրա՝ ուսումնասիրողների մեծ մասը ենթադրում է, որ Վաղարշ Առաջինը հիմնադրեց քաղաք, այն իր անունով կոչեց Վաղարշապատ եւ արքունիքը տեղափոխեց այնտեղ[6]:

Վաղարշ Առաջինի մահից հետո (140/143 թթ.) Անտոնինոս Պիոս կայսրը, առանց պարթեւների համաձայնությունն ստանալու, Հայաստանի գահը

---

2 **Դիոն Կասսիոս**, Հռոմեական պատմություն, թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի. Հին հունական աղբյուրներ, հ. Ա., Երեւան, 1976, LXVIII, 21, 1:

3 **Элий Спартиан**, Жизнеописание Адриана (пер. с латинского С. Кондратева), Вестник древней истории (далее - ВДИ), 1957, թ. 1, XXI, 11, 21. Հայ ժողովրդի պատմություն (այսուհետեւ՝ ՀԺՊ), հ. Ա., Երեւան, 1971, էջ 778:

4 ՀԺՊ, հ. Ա., էջ 779:

5 **Մովսէս Խորենացի,** Պատմութիւն Հայոց (այսուհետեւ՝ Խորենացի), բնական բնագիրը եւ ներածությունը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահանություն), Երեւան, 1991, II, 65. ՀԺՊ, հ. Ա., Երեւան, էջ 779, ցանկ 54:

6 Տե՛ս **Ս. Երեմյան,** Հայաստանը Վաղարշ Ա.-ի օրոք, ՀԺՊ, հ. I, էջ 779, ծան. 53. **Т. Ммомзен**, История Рима, հ. V, М., 1949 էջ 367, հդ. 2. **Г. Тирацян**, К вопросу о градостроительной структуре и топографии древнего Вагаршапата, ИФЖ, 1977, թ. 2, էջ 81. **Г. Тирацян**, Культура древней Армении VI в. до н. э. - III в. н. э. (по археологическим данным), Ереван, 1988, էջ 153-157. **Գ. Տիրացյան**, Վաղարշապատ. Հայկական ճարտարապետության պատմություն, հ. Ա., Երեւան, 1996, էջ 229-233. **Я. Манандян**, О торговлеи городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. - XV в. н. э.) Ереван, 1954, էջ 114-118. **Ս. Կրկյաշարյան**, Հին Հայաստանի եւ Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երեւան, 1970, էջ 120-122. **Ս.Սարդարյան,** Հին Վաղարշապատի տեղադրությունը ըստ հնագիտական եւ մատենագրական տվյալների, ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետեւ՝ ԼՀԳ), 1975, թ. *7, էջ 52-84.* **К. Тревер,** Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э.- IV в. н. э.). М.-Л., 1953, էջ 228 եւ այլն:

հանձնում է ոմն Տիգրանի, ակներեւաբար, Արշակունիների տոհմից (140/143 թթ.), սակայն անհայտ է, թե նա եղել է Պարթեւստանի Արշակունիների՞ց, թե՞ Հայաստանի Արշակունիներից[7]: Մեզ է հասել Անտոնինոս Պիոս կայսեր 140/143 թթ. թողարկած պղնձե դրամ (սեստերտ), որի վրա կանգնած դիրքով պատկերված է Վաղարշ Առաջինին հաջորդած հայոց թագավորը, եւ որի գլխին կայսրը դիադեմա է դնում:

Դրամի դարձերեսի այս պատկերը շրջանակված է լատիներեն արձանագրությամբ. "res Armeniis datus" («թագաւոր հայոց տուեալ»)[8]: Ասել է թե՝ Հայաստանում նոր թագավոր նշանակվեց: Սակայն թագավորի անունը չի հիշատակվում: Ուսումնասիրողները համակարծիք են, որ նոր թագավորը Սոհեմոսն է: Անտոնինոս Պիոսը մի անգամ Հայաստանի գահը հանձնում է Տիգրանին, երկրորդ անգամ Սոհեմոսին (148թ.)[9]: Վերջինիս ժամանակակից «Բաբելոնականք» ("Babyloniaca", «Բաբելոնի պատմություն») երկի հեղինակ Յամբլիքոսն ապրել է Արտաշատում՝ Սոհեմոսի արքունիքում եւ ստեղծագործել այնտեղ[10]: Այդ մասին է հաղորդում Կ. Պոլսի պատրիարք Փոտը (858-867 թթ.). «Բայց նա նաեւ Հռոմի Ծերակույտի անդամ եղավ ու նաեւ հյուպատոս եւ հետո կրկին դարձավ թագավոր Մեծ Հայքի»: Այդ ինքը (Յամբլիքոսը) ծաղկում էր, ինչպես ասում է նա, հենց սրա օրով: Իսկ Հռոմեացոց թագավորությունը ժառանգեց Անտոնինոսը»[11]: Սոհեմոսի՝ երկրորդ անգամ հայկական գահին բազմելու մասին է վկայում նաեւ Դիոն Կասսիոսը. «Մարտիոս Վերոսն ուղարկել էր Թուկիդիդեսին, որպեսզի նա Սոհեմոսին վերստին բերի Հայաստան»[12]: Սոհեմոսը հայկական գահն ստանալու առիթով թողարկել է պղնձե դրամներ (հայտնի է այդպիսի 10 դրամ)[13]: Արտաշատից հայտնաբերված դրամների դիմերեսին արքան ներկայացված է անմորուս, հայկական թագով՝ գագաթին հինգ ելուստներով եւ վզակալով[14]: Թագի ստորին եզրով ապարոշը պատկերված է երկու գծով, ծոծրակին երեւում են վարդակապը եւ ապարոշի ծայրերը: Նրա կողքին երեւում է թագուհու ճակատին կախված հերափունջը

7 **Խորենացի**, II, 64. **Բաբկեն Հարությունյան,** Հայոց պատմության II եւ III դարերի ժամանակագրության շուրջ, «Հանդէս ամսօրեայ», 2007,N *-1-12,* էջ 107-111. ՀԺՊ, հ. I, էջ 780:

8 **Ջ. Պտուկյան,** Հայաստանի վերաբերյալ հռոմեական դրամներ եւ մեդալիոններ, Վիեննա, 1971, էջ 87-88:

9 Խորենացու հիշատակած Տիգրան Վերջինը Սոհեմոսն է: Ըստ Պատմահոր (II, 64) հաղորդման՝ Սոհեմոս-Տիգրանը թագավորել է 42 տարի, որն ընդունում են նաեւ պատմաբանները: Բաբկեն Հարությունյանը գտնում է, որ նա 13 տարի իշխել է 148-161 թթ., եւ 29 տարի՝ 164-191 թթ.: Ընդունելով այս տեսակետը՝ կարծում ենք, սակայն, որ գահակալել է ոչ թե մինչեւ 191 թ., այլ 192/193 թթ.. **Բ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 115:

10 ՀԺՊ, հ. I, էջ 780-781:

11 **Photii,** Biblotheca, 94. ՀԺՊ, հ. I, էջ 781:

12 **Դիոն Կասսիոս**, LXXI, 3,1:

13 Տե՛ս **Ռ. Վարդանյան**, Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ, ՊԲՀ, 2004, թ. 2, էջ 235, նկ. 2, 1-10:

14 Դա վկայում է, որ Արտաշեսյանների թագը շարունակում են կրել Արշակունյաց հարստության արքաները:

եւ վարսերն օղակող ժապավենի մի հատվածը: Դարձերեսին պատկերված են «երկու կոնաձեւ, միմյանց կից, զառիթափ լանջերով ու սրածայր լեռնագագաթներով..., աջ կողմինը մյուսից ավելի բարձր»: Լեռներից վերեւ կիսաշրջանաձեւ դասավորությամբ հունարեն գրություն է՝ ΛΛΟΚΑΙΣΑΡ, ներքեւում Α տառ (տե՛ս նկարը)[15]: Ըստ Ռուբեն Վարդանյանի՝ դրամները թվագրվում են 163 թ. դեկտեմբերից մինչեւ 164 թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածով[16], այսինքն՝ երբ Սոհեմոսը երկրորդ անգամ բազմեց հայկական գահին: Բացի այդ, դրամների վրա թագադրողը Լուկիոս Վերոսն է: Ռ.Վարդանյանն իրավացի է. դարձերեսին պատկերվածները Մասիսն ու Նեխ Մասիք են, ոչ թե Կապադովկիայի Արգոս լեռը, ինչպես ենթադրում են որոշ գիտնականներ[17], եւ Α տառը Արտաշատ մայրաքաղաքի առաջին տառն է[18]: Ի դեպ, Α տառը հանդիպում է նաեւ Տիգրան Երկրորդի, Արտավազդ Երկրորդի եւ Տիգրան V-ի (մ. թ.ա. 6 թ.) դրամների վրա. վերջինս համարվում է Արտաշատի փոդերանոցի մենագիրը[19]: Արարատը պատկերված է նաեւ Տիգրան IV-ի դրամի դարձերեսին: Ինչ վերաբերում է Սոհեմոսի դրամների դարձերեսին Մասիսը որպես դրամատիպ ընտրելուն[20], կարծում ենք՝ Արարատյան դաշտում՝ Արաքսի ափին կառուցված Արտաշատ մայրաքաղաքի դիմաց վեր խոյացող գեղատեսիլ սրբազան լեռն այն ժամանակ նույնպես խորհրդանշել է Հայաստանը: Համաձայն չենք, սակայն, որ 164-167 թթ. Սոհեմոսը գտնվել է Արտաշատում[21]: Հնագիտական պեղումների նյութերը հավաստում են, որ այդ ժամանակ քաղաքը դեռեւս վերականգնված չի եղել[22], եւ որ 164 թ. Սոհեմոսի նստավայրը նոր մայրաքաղաք հռչակված Կայնեպոլիսն էր:

Պարթեւների արքա Վաղարշ Երրորդը, հայկական գահին Սոհեմոսի բազմելը չհանդուրժելով, Անտոնինոս Պիոս կայսեր մահից հետո՝ 161 թ., պահը հարմար նկատելով, հարձակվեց Հայաստանի վրա: Կապադովկիայի հռոմեական ռազմական շրջանի հրամանատար Էլիոս Սեւերիանոսը շտապում է Սոհեմոսին օգնության հասնել: Կարսում՝ Էլեգեայում, սակայն, հայ-պարթեւական զորքերը, Խոսրով զորավարի գլխավորությամբ, կոտորում են հռոմեական զորքերին: Սեւերիանոսն ինքնասպան է լինում[23]:

Սոհեմոսի փախուստից հետո պարթեւները գահը հանձնում են Բակուրին (161-163 թթ.): Այնուհետեւ ներխուժում են Կապադովկիա, այնտեղից

15 Տե՛ս **Ռ. Վարդանյան,** նշվ. աշխ., էջ 235, նկ. 1:

16 Տե՛ս անդ, էջ 245:

17 Տե՛ս անդ, էջ 247-250:

18 Տե՛ս անդ, էջ 251:

19 Տե՛ս **Մ. Զարդարյա ն,** Արտաշատում կտրված դրամների մի տիպի մասին, ԼՀԳ, 1977, թ. *2*, էջ 83, 84:

20 Տե՛ս **Ռ. Վարդանյա ն**, նշվ. աշխ., էջ 252:

21 Տե՛ս անդ, էջ 250:

22 Տե՛ս **Ժ. Խաչատրյան, Ա. Կանեցյան**, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, ԼՀԳ, 1974, թ. 9, էջ 84-87:

23 ՀԺՊ, հ. I, էջ 782:

մտնում Ասորիք, գրավում Մծբինը, Եդեսիան, ինչպես նաեւ Ասորիքի մյուս քաղաքները: Կայսր Մարկոս Ավրելիոսին (161-180 թթ.) անհանգստացնում է պարթեւների հաղթարշավը: Այդ իրադարձությունը ստիպում է նրան կտրուկ քայլերի դիմել. կայսրության ուժերը կենտրոնացնելով արեւելքում՝ Անտիոք է ուղարկում գահակից Լուկիոս Վերոսին (161-169 թթ.), որպեսզի տեղում կազմակերպի պայքարը պարթեւների դեմ եւ վերադարձնի հայկական գահը: Վերջինս զորքերը հանձնում է զորավարներ Ավիդիոս Կասիոսին, Ստատիոս Պրիսկոսին եւ Մարտիոս Վերոսին:

Ստատիոս Պրիսկոսը նշանակվում է Կապադովկիայի շրջանի զորահրամանատար: Նա հարձակվելու էր Հայաստանի վրա: 163 թ. մտնում է Հայաստան, շրջապատում եւ գրավում է Արտաշատը[24]: Ենթադրվում է, որ նա ավերել է Արտաշատը: Ձիներախումների ընթացքում եւ քաղաքը նվաճելուց հետո հռոմեական զորքերը, բնականաբար, թալանել եւ մասամբ ավերել են այն, հատկապես պալատական համակառույցն ու վերնախավի շենքերը[25]:

Բակուրի թագավորության շրջանի մասին տեղեկություններ գրեթե չկան: Ստեփանոս Բուզանդացու մոտ Ասինիոս Քվատրատոսի (161-230 թթ.) «Պարթեւականք» երկի էջերում պահպանված հատվածներից մեկում ասված է. «Այդ ժամանակ հայոց թագավոր Պակորը (Բակուր) գտնվում էր Հայաստանում՝ Արտաշատի մոտ եւ Ուտիքում»[26] , որն Արշակունիների ամառանոցներից մեկն էր:

Համացանցում հին մետաղադրամների Roma Numismatics Limited բրիտանական համբավավոր աճուրդում վաճառքի է հանվել հին հայկական մետաղադրամ: Դրամը բնութագրելիս նշվում է , որ դիմերեսին հայոց արքա Տիգրան Չորրորդն է եւ քույրը՝ Էրատո թագուհին: Դարձերեսին Արարատ լեռան պատկերն է՝ իր զույգ գագաթներով: Մետաղադրամը հայտնաբերվել է Արտաշատից 1978 թ.: Դրամի վրայի հունարեն արձանագրությունը վերծանվել է իբրեւ «Կեսարի բարեկամ»:

Հայտնի է նաեւ,որ նույն թվին Արտաշատից հայտնաբերված նման պատկերով երկրորդ նմուշը վերագրվում է Սոհեմոսին[27]:

Տիգրան Չորրորդը եւ Էրատոն Տիգրան Երրորդի զավակներն էին[28]: Տիգրան Չորրորդի թագավորության ժամանակաշրջանի մասին (մ.թ.ա. 8-ից մինչեւ մ.թ.ա. 1 թթ., որոշ ընդմիջումով, ակներեւաբար՝ մ.թ.ա. 5-2 թվականնե-

24 Տե՛ս **Կ. Тревер,** նշվ. աշխ., էջ 228, ՀԺՊ, հ. I, էջ 783: Վաղարշապատի հիմնադրման հարցի շուրջ:

25 Տե՛ս **Ժ. Խաչատրյան, Ա. Կանեցյան**, նշվ. աշխ., էջ 84-87, տախտ. II:

26 **Կ. Тревер**, նշվ. աշխ., էջ 232, ՀԺՊ, հ. I, էջ 783: Այս վկայությունն անորոշ է. Բակուրը չէր կարող միաժամանակ եւ՝ Արտաշատի մոտ լինել, եւ՝ Ուտիքում:

27 Տե՛ս **Ռուբեն Վարդանյան**, Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ, ՊԲՀ, 2004, թ. 2, էջ 235, նկ.11:

28 Տե՛ս **Корнелии Тацит,** Сочинение в двух томах, том первый, Анналы, Ленинград, 1969, II, 3 հդ. 5. ՀԺՊ, հ. I, Երեւան, 1971, էջ 632:

ը) քիչ է հայտնի: Նա իր դրամների վրա կրում է «արքայից արքա» տիտղոսը, որը վկայում է Հռոմից անկախ լինելը[29]:

Հայտնի չէ՝ Սոհեմոսը դրամ հատե՞լ է, թե՞ ոչ. դրամի վրա թագուհու հետ է պատկերվել, կարծում ենք՝ այն հիմնավորելու կարիք ունի: Այդ Սոհեմոսն ինչո՞ւ էր կրելու Արտաշեսյանների թագը: Հայտնի է, որ Տիգրան Չորրորդն է միայն գահակից քրոջ՝ Էրատոյի հետ պատկերվել, որը նաեւ նրա կինն էր: Ենթադրվում է, որ Տիգրան Չորրորդը Էրատոյի հետ կառավարել է մ.թ.ա. 2-ից մ.թ. 1 թվականը: Հյուսիսային ցեղերի՝ բարբարոսների դեմ մղված պայքարում Տիգրան Չորրորդի զոհվելուց հետո Էրատոն հրաժարվում է գահից[30]: Էրատոն մեկ անգամ եւս միայնակ գահակալել է մինչեւ մ.թ. 8 թվականը: Դրանով ավարտվում է Արտաշիսյան հարստության՝ Հայաստանի երկուհարյուրամյա գահակալությունը[31]:

Արտաշատում 1978 թ. ի հայտ եկած վերոհիշյալ դրամների դիմերեսին, ինչպես նշվեց, Տիգրան Չորրորդը եւ Էրատոն են պատկերված, դարձերեսին՝ Մասիսը եւ Նեխ Մասիքը: Սոհեմոսի նստավայրը «Նոր քաղաքն» էր, որտեղից Արարատի զույգ գագաթներն այդպես չեն երեւում, ինչպես դրամի դարձերեսինն է: Դրամները հատվել են Արտաշատում Տիգրան Չորրորդի օրոք, Սոհեմոսի կառավարումից 150 տարի առաջ: Վերջինիս վերագրվող դրամների արքայի պատկերը նման է, գրեթե նույնն է[32], ինչ Տիգրան Չորրորդինը:

Հելլենիստական շրջանում Հայաստանում եւ Պարթեւստանում տարածում է ստանում կառավարող դինաստիայի արքաների եւ թագուհիների մահացած նախնիների պաշտամունքը: Այդպես էր Սելեւկյանների եւ Պտղոմեոսյանների երկրներում: Այդ ավանդույթը Հայաստանում տարածված էր մ.թ.ա. II դ., իսկ մ.թ.ա. առաջին դարում տարածում է ստանում նաեւ կառավարող արքաների պաշտամունքը[33]: Աստվածացվել են նաեւ Տիգրան Չորրորդը եւ քույրը՝ Էրատոն: Թագուհու Էրատո անունը ոչ թե նրա տոհմական, այլ Ապոլոնին ուղեկցող ինը մուսաներից մեկի անունն է[34]:

Այս առումով ուշագրավ է Հայաստանի Հանրապետության Արենի հնավայրում հայտնաբերված զոհասեղանի հունարեն արձանագրությունը. «Էմիլիոս Վալես (Վալենտ) մայր երկրին (Դեմետրին) Օլյուպրի աստվածուհի տիրուհուն»[35]: Ենթադրվում է, որ հռոմեական զորքերը երկու մասի են բաժանվել,

29 Տե՛ս **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Հ. I, Երեւան, 1977, էջ 290, 291:

30 Տե՛ս **Тацит,** Анналы, II,3: Դիոն Կասսիոս, հին հունական աղբյուրներ, թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երեւան, 1976, գիրք 55, 9, 4, **Г. Х. Саркисян**, Царица Эрато, Кавказ и Византия, вып. 6, Ереван, 1988, էջ 17:

31 Տե՛ս **Тацит,** Анналы, II,4. **Г. Х. Саркисян**, նշվ. աշխ.:

32 Տե՛ս **Ռուբեն Վարդանյան**, նշվ. աշխ., նկ. 2, 2-10:

33 Տե՛ս **Г. Х. Саркисян**, նշվ. աշխ., էջ 14-15:

34 Տե՛ս անդ. էջ 18:

35 **Տեր - Մարտիրոսով**, Արենիի հունարեն արձանագրությունը, ՊԲՀ, 1989, թ.*1*, էջ 178, նկ. 1:

որպեսզի Նախիջեւանից Շաղատ եւ Արփա գետի կիրճով Արփանեալ տանող ճանապարհները հսկողության տակ առնեն, թույլ չտան պարթեւներին՝ օգնելու Բակուրին[36]: Սակայն, հռոմեական զորքերը 163 թ. ամռանը երեք ուղղություններով ընդհանուր հարձակման են անցնում դեպի Հայաստան, Ասորիք եւ Միջագետք[37]: Պարթեւները Բակուրին օգնելու հնարավորություն չունեին. նրանք հայտնվել էին ծանր վիճակում: Իսկ 164 թ. Դուրա-Եւրոպոս քաղաքի մոտ Ավիդիոս Կասիոսի հրամանատարությամբ Ասորիքում եւ Միջագետքում գործող հռոմեական զորքերից կրած պարտությունից հետո Վաղարշ Երրորդն ստիպված էր անցնել Տիգրիսի ձախ՝ արեւելյան ափը:

Հռոմեացիները գրավում են Հյուսիսային Միջագետքի Եդեսիա եւ Մծբին քաղաքները, հասնում Բաբելոնիա, ավերում, հրի մատնում Տիգրիսի վրայի Սելեւկիան եւ Տիզբոն մայրաքաղաքը[38]: Ակներեւաբար, Բակուրին հետապնդող հռոմեական զորքերին հաջողվել է հասնել եւ գերել նրան: Զորքերի հրամանատարը եղել է Էմիլիոս Վալեսը, որը հաղթանակի առթիվ դրոշմել է զոհասեղանի հունարեն արձանագրությունը: Բակուրին գերելու լուրն առնելուց հետո միայն Մարտիոս Վերոսը կարող էր Թուկիդիդեսին, որը, հավանաբար, եղել է Կապադովկիայում տեղակայված լեգեոններից (XII Fulminata եւ XV Apollinaris) մեկի հրամանատարը[39], ուղարկել Սոհեմոսի հետեւից: 165 թ. Հռոմում նշում են Հայաստանի եւ Պարթեւստանի դեմ տարած հաղթանակները: Սենատը Մարկոս Ավրելիոսին եւ գահակից Լուկիոս Վերոսին շնորհում է «Հայկական» (Armeniacus) եւ «Պարթեւական» (Parthicus) տիտղոսները[40]: Այդ առթիվ թողարկվում են դրամներ:

Հռոմեացիներն Արտաշատի գրավումից հետո նրանից ոչ հեռու հզոր զորաջոկատ են տեղակայում, կառուցում զորակայան: Դիոն Կասսիոսը վկայում է. «Մարտիոս Վերոսն ուղարկել էր Թուկիդիդեսին, որպեսզի նա Սոհեմոսին վերստին բերի Հայաստան: ...Արդ՝ (Մարտիոսը) գալով նոր քաղաք, որն իր ձեռքում պահում էր Պրիսկոսի դրած հռոմեական կայազորը, ապստամբության հանդգնողներին թե՛ խոսքով եւ թե՛ գործով հնազանդեցնելուց հետո հայտարարում է, որ (այդ քաղաքը) կլինի գլխավորը Հայաստանում»[41]: Ականավոր գիտնական Մոմզենը, հենվելով այս վկայության վրա, համարում է, որ հռոմեական զորավար Ստադիոս Պրիսկոսը 163 թ. հիմնադրել է նոր մայրաքաղաք Կայնեպոլիսը (Նոր քաղաք)[42]:

---

36 Անդ, էջ 186:

37 ՀԺՊ, h. I, էջ 783:

38 Տես անդ, էջ 783, 784:

39 Տես **Կ. Тревер**, նշվ. աշխ., էջ 234. **Pauly-Wissowa**, Kroll. Realencyclopadie der Klassischen Altertuswissenschaft.Thukydides.

40 Տես **Կ. Тревер,** նշվ. աշխ., էջ 237-238, ՀԺՊ, h. I, էջ 786-787:

41 **Դիոն Կասսիոս**, LXXI, 3, 1:

42 Տես **Т. Моммзен**, История Рима, т. V. М., 1949, էջ 367, прим. 2. ՀԺՊ, h. I, էջ 779, ծան. 54:

Այսպիսով՝ քանի որ Արտաշատն ավերված էր, եւ պարթեւների հետ պատերազմն ավարտված չէր, Սոհեմոսի նստավայրը դարձավ Կայնեպոլիսը՝ գտնվելով հռոմեական լեգեոնների պաշտպանության ներքո: Պարթեւների վերջնական պարտությունից հետո՝ 166 թ., երկու երկրների միջեւ կնքված խաղաղության պայմանագրով Հռոմի եւ Պարթեւստանի միջեւ վերականգնվում է մինչեւ 161 թ. վիճակը[43]: Ակներեւաբար, Վաղարշ Երրորդն այս պայմանագրով հրաժարվել է իր բոլոր նվաճումներից, համաձայնել է, որ հայկական գահին բազմի հռոմեական դրածոն՝ պատանդ տալով իր որդուն՝ Միհրդատին: Այլապես անհասկանալի է դառնում Բակուրի եղբոր՝ Միհրդատի՝ Հռոմում հայտնվելը, որը հիշատակվում է վերջինիս մահվան հանգամանքով, եւ զոհասեղանին դրոշմվում հունարեն արձանագրության տողերով[44]:

Սոհեմոսի՝ երկրորդ անգամ հայկական գահին վերահաստատվելուց (164 թ.) հետո՝ 166 թ. մինչեւ Սեպտիմիոս Սեւերոսի կայսր դառնալը (193թ.) Հայաստանի վերաբերյալ գրեթե ոչինչ հայտնի չէ: Վաղարշապատում հայտնաբերվել են լատիներեն երկու արձանագրություն, որոնցից մեկը թվագրվում է 175 թ.[45], մյուսը՝ 185 թ.[46]: Առաջինից իմանում ենք, որ Մարկոս Ավրելիոսի օրոք՝ 173-175 թթ., Նոր քաղաքում կանգնած է եղել հռոմեական կայազոր: Կապադովկիայի լեգատ Արիոս Անտոնինոսի հրամանատարությամբ եղել են XII Fulminata եւ XV Apollinaris լեգեոնների երկու ջոկատ (vexillatio) եւ այլ զորամասեր, որոնք ստեղծել են պաշտպանական համակարգ, որի պատի վրա տեղադրված է եղել արձանագրությունը: Արձանագրություններից երկրորդը վերաբերում է Կոմմոդոսի (180-192 թթ.) ժամանակաշրջանին: Այստեղ հիշատակվում է միայն XV Apollinaris լեգեոնը: Կապադովկիայի լեգատը եղել է Կելիոս Կալվինը: Պաշտպանական համակարգի կառուցողական աշխատանքները գլխավորել է ցենտուրիոն Ավրելիոս Լապրասը[47]: Այսինքն՝ այստեղ էր կանգնած XV Apollinaris լեգեոնը 163-175 թթ. եւ 185 թ.: Իրավացի է Կ. Տրեւերը, երբ ենթադրում է, թե Կապադովկիայի բանակի մեջ մտնող այս լեգեոնը կցված է եղել Հայաստանին[48]: Ակներեւաբար, հռոմեական կայազորեր են տեղակայվել ոչ միայն Կայնեպոլիսում, այլեւ ստրատեգիական նշանակություն ունեցող քաղաքներում ու ամրոցներում՝ Արտաշատում[49], Գառնիում[50] եւ

43 ՀԺՊ, հ. I, էջ 786:

44 Տե՛ս **Կ. Բ. Тревер**, նշվ. աշխ., էջ 237-238, ՀԺՊ, հ. I, էջ 786-787:

45 Ս. Երեմյանը այն թվագրում է 176 թ. տե՛ս ՀԺՊ, հ. I, էջ 788:

46 Տե՛ս **Կ. Тревер,** նշվ. աշխ., էջ 229, 265 եւ հտ., 268 հտ., ՀԺՊ, հ. I, էջ 788:

47 Տե՛ս անդ, էջ 229, 268, 269, ՀԺՊ, հ. I, էջ 788:

48 Տե՛ս անդ, էջ 269:

49 Տե՛ս **Ռ. Մանասերյան,** Հայաստանը Արտավազդից մինչեւ Տրդատ Մեծ, Երեւան, 1997, էջ 122:

50 Տե՛ս **Б. Аракелян**, Гарни II, Результаты раскопок 1951-1955, Археологические раскопки в Армении, 7. Ереван, 1957, էջ 84. **Ж. Хачатрян, А. Тоникян,** Античная баня в Гарни, ВДИ, 1986, 3, էջ 149, 150. **Ժ. Խաչատրյան**, Գառնիի պեղումները, ՀՍՍՀ-ում 1981-1982 թթ., դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Երեւան, 1983, էջ 23-

այլուր: Այդ են վկայում Գառնիում՝ պարսպի հարավարեւելյան հատվածում՝ ներսում՝ տաճարից 50 մ հեռավորության վրա կառուցված երկհարկանի բնակարանում հայտնաբերված հռոմեական 49 արծաթե դրամներից բաղկացած I-II դարերի գանձերը, որոնց մեջ առկա են Մարկոս Ավրելիոսի յոթ դրամները, Լուչիի, Լուկիոս Վերոսի կնոջ (161-169 թթ.), Կոմմոդոսի (180-192 թթ.) եւ իր կնոջ՝ Քրիստինեի մեկական դրամները, ինչպես նաեւ Գառնի գյուղի հյուսիսարեւմտյան մասում՝ գետակի ափին հայտնաբերված, հավանաբար, բարձրաստիճան հռոմեացու դամբարանում գտնված ուղեկցող նյութերը, այդ թվում՝ Տրայանոսի եւ Անտոնինոս Պիոսի ոսկե դրամները:

Արտաշատում կայազորեր էին տեղակայված եղել նաեւ հաջորդ կայսրերի օրոք՝ մ. թ. ա. I դ. Մարկոս Անտոնիոսի կողմից Արտավազդին գերեվարելուց հետո[51], ինչպես նաեւ Տրայանոսի ժամանակ[52], հնարավոր է՝ նաեւ Սոհեմոսի կառավարման երկրորդ շրջանում: Ըստ Վաղարշապատի լատիներեն վիմագրերի՝ հռոմեական կայազորերը 20 տարուց ավելի զբաղվել են շինարարությամբ եւ ամրություններ կառուցելով: Ըստ Վաղարշապատի դամբանադաշտից 1967 թ. հայտնաբերված կարասային թաղման բերանին դրված կղմինդրի, որը կրում է սկյութական IV լեգեոնի դրոշմը[53]՝ կարելի է ենթադրել, որ Նոր քաղաքի կառուցապատմանն իր մասնակցությունն է ունեցել նաեւ այդ լեգեոնը, որը 114-117 թթ. շինարարական աշխատանքներ է կատարել Արտաշատում[54]:

Հնագետ Հ. Հակոբյանի կարծիքով՝ Կայնեպոլիսի զորակայանը Մելիտենեի եւ Սատաղի զորակայանների նման քառանկյուն հատակագծով ամրոց-լիմես պետք է լիներ եւ այն կառուցվեր Վաղարշապատ-Վարդգեսավանի հին բնակավայրի տեղում: Հ.Հակոբյանը կարծում է, որ հռոմեացիները Վաղարշապատը վերանվանեցին Կայնեպոլիս եւ հռչակեցին Հայաստանի մայրաքաղաք, որ Վաղարշապատի տեղում հռոմեացիներից շատ առաջ եղել է հեթանոսական տաճար, իսկ վերջինիս հարեւանությամբ՝ արքայական պալատ. «Ավելի ուշ Հայաստանի նոր մայրաքաղաքում ծավալվում են մեծածավալ շինարարական աշխատանքներ, որոնց ապացույցն այստեղ գտնված 175 թ. եւ 185 թ. վերաբերող լատինական երկու արձանագրություններն են»[55]:

---

24. **Ժ. Խաչատրյան**, Գառնիի տաճարը Հերե՞ոն, վկայարա՞ն.- Հայոց սրբերը եւ սրբավայրերը, Երեւան, 2001, էջ 246. **Г. Саркисян,** Римские монеты в Армении в I в.- начале II в., «Բանբեր Հայաստանի արխիվների», 1986, թ.2, էջ 146:

51 Տե՛ս **Դիոն Կասսիոս**, XLIX, 44, 4, LI, 16, 2. ՀԺՊ, h. I, էջ 623, 627:

52 Տե՛ս **Բ. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 308:

53 Տե՛ս **Ռ. Թորոսյան, Ս. Կրկյաշարյան,** Հնագիտական նյութեր Էջմիածնից, ՊԲՀ, 1971, Թ. 4, էջ 287. **Ժ. Խաչատրյան,** Արտաշատից հյուսնաբերված լատիներեն արձանագրությամբ դրոշմված կղմինդրներ եւ աղյուսներ,ՊԲՀ, 2006, թ.1, էջ 230-235:

54 Տե՛ս **Բ. Առաքելյան,** նշվ. աշխ., էջ 302-311:

55 **Հ. Հակոբյան,** Մեծ ու Փոքր Հայքերի սահմանագլխի հռոմեական ամրությունների համակարգը, ՊԲՀ, 1986, թ. 4, էջ 152-154:

Ուղղանկյուն հատակագծով եւ քառակուսի բուրգերով մի ամրոց էլ բացվել է Արագածոտնի Արուճ[56] հնավայրում, որը, ըստ Եղիշեի, եղել է արքունի ձմեռոց-զորակայաններից մեկը, որը Ե. դ. կեսերին ավերել է Վասակ Սյունին[57]: Ամրոցը թվագրվում է Դ.-Է. դարերով: Սակայն այն ավելի վաղ, ակներեւաբար, II-III դարերի է պատկանում, քանի որ Դ. դ. այդ զորակայանները փոխարինվեցին նոր տիպի կառույցներով, որոնք հիշեցնում էին ներքին բակի շուրջ կառուցված, ուղղանկյուն մեծ, հզոր աշտարակներով միջնադարյան դղյակները[58]:

Արդ, դառնանք այն խնդրին, թե մինչեւ Կայնեպոլիսի կառուցումը, այստեղ եղե՞լ է Վաղարշ Առաջինի հիմնադրած Վաղարշապատ մայրաքաղաքը: Իտալացի ականավոր պատմաբան Մոմզենը համարում է, որ 163 թ. Արտաշատի գրավումից հետո նրանից ոչ հեռու հռոմեացիները հիմնեցին զորակայան, տեղադրեցին հզոր կայազոր: Այն անվանեցին Կայնեպոլիս, Նոր քաղաք կամ Վաղարշապատ: Վերջինս ազդարարեցին երկրի առաջին քաղաք՝ մայրաքաղաք: Եվ 164 թ. Բակուրի տեղը գահին հաստատեցին Սոհեմոսին[59]: Ասել է թե՝ այդ տեղում քաղաք, առավել եւս մայրաքաղաք չի եղել:

Արտաշատի վերին քաղաքում միջնաբերդն ամենաբարձրն էր (70 մ) եւ ամենամեծ մակերեսն ուներ: Այն Արարատյան դաշտի նկատմամբ ունեցած իր իշխող դիրքի, զառիթափ լանջերի պաշտպանական ճկուն համակարգի շնորհիվ անառիկ էր, գտնվում էր առեւտրական ճանապարհների խաչմերուկում, Արաքսի ափին, որի վրա Տափերական կամուրջն էր: Ստրատեգիական եւ տնտեսական առումով բազում առավելություններ ուներ եւ վաղուց էր հայտնի հունահռոմեական աշխարհին՝ իբրեւ խոշոր եւ վաճառաշահ քաղաք: Անկախ այն բանից, թե երբ է կառուցվել Վաղարշապատը, նրա դիրքն ստրատեգիական առումով անհամադրելի էր Արտաշատի հետ: Ուստի Վաղարշ Առաջինը նոր մայրաքաղաք կառուցելու կարիք չուներ: Եւ ինչպես Վաղարշ Առաջինի, այնպես էլ նրան հաջորդած Սոհեմոսի նստավայրը եղել է Արտաշատը:

Հայտնի է, որ մայրաքաղաքը պետք է ունենար լավ պաշտպանված հզոր միջնաբերդ՝ իր պալատական, վարչական շենքերով: Այն կառուցվում էր առաջին հերթին: Մայրաքաղաքում պետք է լինեին նաեւ երկրի գլխավոր աստվածների, տվյալ դեպքում՝ Անահիտ-Արտեմիսի եւ Արեգ-Միհր-Ապոլոն-Տիրի տաճարները, ինչպես Արմավիրում, Երվանդաշատում, Արտաշատում: Եթե Վաղարշ Առաջինը հիմնադրած լիներ Վաղարշապատ քաղաքը, այն էլ մայ-

56 **Բ. Լ. Սադոյան**, Արուճի վաղ միջնադարյան հուշարձանները, ՊԲՀ, 1985, թ. 4, էջ 162-165, գծ. 1:

57 **Եղիշէ,** Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին (հրատ. պատրաստելը եւ նախաբանը Ե. Տեր-Մինասյանի), Երեւան, 1957, էջ 78-79:

58 "Всеобщая история архитектуры в XII томах" (այսուհետ՝ ВИА), հ. II. М., 1973, էջ 509:

59 **Т. М о м м з е н**, նշվ. աշխ., էջ 367, ծան. 2, 3:

րաքաղաքը, բնականաբար, վերոհիշյալ բոլոր կառույցները պետք է ունենար, դառնար Սոհեմոսի համար նոր նստավայր: Կայնեպոլիսը կառուցելու կարիքը չէր լինի, եւ չէր փոխվի քաղաքի անունը: Առաջին անգամ չէ, որ Հայաստանը ապստամբում էր հռոմեացիների դեմ, եւ առաջին անգամ չէ, որ Հռոմը հայկական գահին հաստատում էր իր դրածոյին, թեեւ՝ Արտաշատի անունը չի փոխվել: Ըստ լատիներեն արձանագրությունների՝ հռոմեական կայազորը 23 տարի՝ մինչեւ Սոհեմոսի մահը՝ 192/193 թթ., զբաղված է եղել շինարարությամբ:

Արդ, ի՞նչ էին կառուցում հռոմեացիները: Ուսումնասիրողների մի մասը կարծում է, որ Վաղարշապատը կառուցել է Վաղարշ Առաջինը Վարդգեսավանի կամ Արտիմեդի տեղում: Հռոմեացիները 163 թ. գրավեցին Արտաշատը, ճնշեցին ապստամբությունը, այնուհետեւ փոխեցին Վաղարշապատի անունը, այն վերանվանեցին Նոր քաղաք (Կայնեպոլիս) եւ հռչակեցին Հայաստանի մայրաքաղաք[60]: Եթե Վաղարշապատը նույնպես ավերված լիներ, աղբյուրներն Արտաշատի հետ կհիշատակեին նաեւ Վաղարշապատի՝ երկրորդ մայրաքաղաքը գրավելու եւ ավերելու մասին: Արեւելագետ Կ. Տրեւերը գտնում է, որ 163 թ. Վաղարշապատում կամ նրա մոտ հռոմեացիները ամրություն կառուցեցին եւ այնտեղ տեղավորեցին հզոր կայազոր, այն անվանեցին Կայնեպոլիս «Նոր քաղաք»[61]: Արտաշատի գրավումը եւ հռոմեական կայազորի համար հատուկ ամրության կառուցումը Կ. Տրեւերը կապում է Հայաստանը հռոմեական պրովինցիա հայտարարելու նպատակների հետ[62]: Մինչդեռ հռոմեացիները Հայաստանը գրավել են նաեւ մինչ այդ, եւ Արտաշատի առկայությունը չի խոչընդոտել (օրինակ Տրայանոսին) Հայաստանը հայտարարելու պրովինցիա:

Աշխ. Քալանթարը գտնում է, թե արդարացի է Խորենացին, երբ արձանագրում է, որ Վաղարշապատը շատ ավելի հին է («Արտիմեդ քաղաք», «Վարդգեսի ավան», II, 65): Կասկածից վեր է, որ մեծ պետք է լիներ Վաղարշի դերը, որ քաղաքը նրա անունով կոչվեր: Հիմնազուրկ է Վաղարշին հիմնադիր համարելը, ինչպես անում են որոշ ուսումնասիրողներ, «...անկախ նրանից, թե Վաղարշն ապրել է II դարի սկզբին, թե՞ նրա վերջին»[63]: Սակայն եղած բնակատեղին նա է պարսպապատողն ու քաղաքի վերածողը, ինչպես Խորենացին ավետում է՝ «Վաղարշ պատեաց պարսպաւ եւ հզոր պատուարաւ (հզոր աւանն Վարդգեսի) եւ անուանեաց Վաղարշապատ, որ եւ Նոր քաղաք»[64]: Ըստ

60 ՀԺՊ, h. I, էջ 788, **Գ. Տիրացյան**, Վաղարշապատ, էջ 229. **С. Еремян**, Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ,153, էջ 21,22 **Г. Тирацян**, К вопросу о градо-строительной структуре..., էջ 81-83:

61 **К. Тревер,** նշվ. աշխ., էջ 228:

62 Անդ, էջ 228-229:

63 **Ա. Քալանթար,** Հին Վաղարշապատի պեղումները, Երեւան, 1935, էջ 55:

64 **Խորենացի**, II, 65:

Մանանդյանի՝ «Խորենացու ենթադրությունը Վաղարշապատի պարիսպների եւ հողապատնեշի կառուցման մասին, հավանաբար, հիմնված է ոչ թե պատմական աղբյուրների տեղեկությունների վրա, այլ Վաղարշապատ անվան ոչ ճիշտ մեկնաբանության»[65]: Խոսքը վերաբերում է քաղաքի անվանը՝ «Վաղարշ» եւ «պատ» - «աբատ» (քաղաք, բնակություն):

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, կարծիքները տարբեր են եւ հաճախ հակասական: Անտեսված են քաղաքաշինության սկզբունքներն ու, թեեւ կարճատեւ, հնագիտական պեղումների արդյունքներն ու Էջմիածնի Մայր տաճարի, Հռիփսիմեի եկեղեցու վերակառուցողական աշխատանքների ժամանակ ի հայտ եկած նյութերը: Վաղարշապատի հյուսիսարեւելյան հատվածում 1926-1929 թթ. պեղվել են թրծած կավե սարկոֆագներ: 1930 թ-ին դամբարաններ են բացվել («սրվակավոր») Այգեգործական ընկերության գինետան շինարարության ժամանակ[66]: Հռիփսիմեի տաճարի դիմացի թաղումները Աշխ. Քալանթարը համարում է հեթանոսական-քրիստոնեական խառը թաղումներ: Ընդհանրապես հայտնաբերվել են հինգ տարբեր տիպի դամբարաններ[67]: Հռիփսիմեի տաճարին կից պեղվել են սալարկղային թաղումներ, որոնց մեջ մեկական ապակե փոքր սրվակ է դրված եղել եւ զանազան զարդեր, սերդոլիկից, ագաթից, ապակուց, արծաթից, բրոնզից մատանիներ, գեմաներ, ուլունքներ, ֆիբուլա եւ այլն[68]: Մյուս ձեւը հողի շերտի կտրվածքում կատարված թաղումն է, որը նույնպես ծածկված է եղել սալ քարերով: Գտնված իրերի մեջ եղել են բրոնզե զարդեր, ուլունքներ: Առկա է նաեւ արծաթապատ պղնձե մի դրամ, որը, ըստ Զոգրաֆի, Վեսպասիանոսի կամ Տիտոսի 69 կամ 71 թ. թողարկած դրամն է[69]: Ինչ վերաբերում է թրծած կավից կաղապարված սարկոֆագներին, վերջիններն ուղեկցող նյութեր չեն պարունակում, ծածկված են կավե կափարիչով, այնուհետեւ քարե սալերով: Ուշագրավ են թրծած կավե կոշկաձեւ սարկոֆագները, որոնք Հայաստանի Հանրապետության մյուս հուշարձաններից մեզ հայտնի չեն: Վերջիններս աղերսվում են Միջագետքի[70] սարկոֆագների հետ: Հինգերորդ տիպը օվալաձեւ իրանով կարասային թաղումն է, որն ուղեկցող նյութերով առավել հարուստ է: Գտնվել են բրոնզե,

65 **Я. Манандян,** նշվ. աշխ, էջ 116:

66 **Ա. Քալանթար,** նշվ. աշխ., էջ 12:

67 Անդ, էջ 37, նկ. 12:

68 Տե՛ս անդ, էջ 37, 38, նկ. 13ա, տախտ. VII-VIII:

69 Տե՛ս անդ, , էջ 39, 51, նկ. 13 բ-գ:

70 **E. F. Schmidt,** Persepolis, vol. II. Chicago, 1957, pl. 86-88; **R. Ghirshman,** Les fouilles de Suse 1946-1951.- Revue des arts, 1957, III, s. 188, **David and Joan Oates**, Nimrud, 1957.- The Hellenistic Settlement, Iraq, vol. XX, p. 2, 1958, pl. XXVII, **W. Andrae and H. Lenzen,** Die Partherstadt Assur, Leipzig, 1933, taf. 43, d, h, 45, a-f, 47, h, i. **N. P. Joll,** The Necropolis, The Excavations at Dura-Europos. Preliminary Report of the Ninth Season of Work 1935-1936. New Haven, London, 1946, p. 95-97, fig. 3-5, pl. XXVII-XXVIII. **L. Watermann,** Second Preliminary Report upon the Excavations at Tel Umar.-Iraq, Ann Arbor, 1933, p. 48, pl. XVI. 2. **Ժ. Խաչատրյան, Ռ. Թորոսյան,** Նյութեր Վաղարշապատի հյուսիս-արեւելյան դամբարանադաշտից, ԼՀԳ, 1976, թ. 5, էջ 100:

Աֆրոդիտե

Տիգրան Չորրորդ (2)

Տիգրան Չորրորդ և Էրատո
Արարատ լեռը

Էրատո

Տիգրան Չորրորդ և Արարատ լեռը

թանկագին քարով (ռուբին) արծաթե մատանիներ, գեմաներ, մանյակներ, ուլունքներ եւ այլն[71]:

Առաջին չորս տիպի դիակները թաղված են եղել մեջքի վրա պառկած, իսկ կարասայինում՝ կուչ եկած, ոտքերը ծալած դիրքով: Ուղղությունը, բացի կարասային թաղումից, արեւելք-արեւմուտք է, գլուխը՝ արեւմտյան կողմում՝ աննշան շեղումներով: Դիակների դիրքի եւ ուղեկցող նյութերի հիման վրա վերջիններս թվագրվում են հռոմեական դարաշրջանով: «Այսպիսով ստացվում է մի ընդարձակ հանգստարան միեւնույն ժամանակաշրջանի, որը ներկայացնում է մեծ քաղաքի նեկրոպոլը»[72]: Աշխ. Քալանթարը գտնում է, որ ուղեկցող վերոհիշյալ նյութերը «...ոչ միայն ընդհանրապես համապատասխանում են այդ ժամանակաշրջանին (հռոմեական - Ժ. Խ.), այլ մեծ մասամբ իրենց թե՛ տիպով եւ թե՛ ծագումով կարող են ճանաչվել հունահռոմեական՝ իբրեւ նմանություն կամ ուղղակի հռոմեական արտադրություն»[73]:

Վաղարշապատի հռոմեական շրջանի համարվող դամբարանները, սակայն, եւ՛ իրենց դիակների թաղման դիրքով (արեւելք-արեւմուտք, գլուխը արեւմտյան կողմում) եւ՛ ուղեկցող նյութերով պատկանում են III դ. վերջ - V դ.[74]: 1974-ին Երեւան-Էջմիածին մայրուղու Զվարթնոցի պետական տնտեսության անասնագոմերի մոտ՝ նույն դամբանադաշտում, պատահաբար բացվել են սալարկղային, կարասային եւ կավե թրծած սարկոֆագների մեջ կատարված թաղումներ[75]:

Սալարկղները պատրաստվել են տարբեր չափերի տուֆե սալերից: Կարասները՝ սուր նստուկով են (բարձր. 1 մ)՝ նման Արտաշատի եւ Գառնիի կարասներին: Կավե սարկոֆագները (դագաղները) ծածկվել էին կավե երեք սալերով, որոնց վրա փորագիր հավասարաթեւ մեկական խաչ կամ ռուսերեն Л տառը հիշեցնող նշան է արվել (երկար. 160-192 սմ, լայն. գլխ. մասում 50-52 սմ, ոտքերի կողմում 30-32 սմ, խոր. 27 սմ): Կավե սալերը ծածկվել են 5-15 սմ հաստությամբ ավազախառը հողով, որի վրա շարվել են 5-10 սմ հաստության տուֆե սալեր: Կավե եւ տուֆե սալերի միջեւ՝ հողի լիցքում, տեղադրվել են մեծ մասամբ ապակե զանազան սրվակներ, թասեր, կավե միկանթանի գավաթ, բրոնզե ոլորուն պոչով թիակ, մատանի, կավե ճարմանդ եւ այլ իրեր: Դիակները թաղված էին մեջքի վրա պառկած դիրքով: Դագաղները (սարկոֆագները) ունեին տարբեր ուղղություն: Այս դամբարանները նույնպես իրենց ձեւով, ծեսով եւ ուղեկցող նյութերով պատկանում են III-V դդ.: Ըստ

71 Տե՛ս **Ա. Քալանթար,** նշվ. աշխ., էջ 39-41, տախտ. VII-VIII, նկ. 13 դ, ե. զ. է:

72 Անդ, էջ 42, 43:

73 Անդ, էջ 51:

74 Տե՛ս **Բ. Առաքելյան, Գ. Տիրացյան, Ժ. Խաչատրյան**, Հին Հայաստանի ապակին, Հայաստանի հնագիտական հուշարձանները, 3, Երեւան, 1969, էջ 13, 63, 137-140, 142, 145, **Ժ. Խաչատրյան, Ռ. Թորոսյան**, նշվ. աշխ., էջ 104, ծան. 16:

75 Տե՛ս **Ժ. Խաչատրյան, Ռ. Թորոսյան**, նշվ. աշխ., էջ 99:

որում, նախորդ դամբարանների ապակին, ինչպես նաեւ մեր հայտնաբերած ապակեղենի մեծ մասը տեղական՝ Վաղարշապատի արտադրանք է: Այստեղ ապակեգործության գոյությունը եւ՛ գրավոր աղբյուրներով, եւ՛ հնագիտական գտածոներով հաստատված է[76]: Հնարավոր է միայն, որ փորագրելու եւ հղկելու եղանակով արված գծերով, շրջաններով, օվալաձեւ ու բրնձաձեւ զարդերով հարդարված ափսեները ներմուծված լինեն Միջագետքից: Այսպիսով՝ դամբարանների պեղումների արդյունքները չեն առնչվում Վաղարշապատի II դարի պատմության եւ մշակույթի հետ:

Ըստ գրավոր աղբյուրների եւ լատիներեն արձանագրությունների՝ հռոմեական կայազորը կառուցում էր ամրություն՝ ուղղանկյուն հատակագծով, քառանկյուն աշտարակներով «կաստելում»-ների ձեւով, որը լեգեոնների ճամբարների փոքրացված կրկնօրինակն էր[77]: Հռոմեական պետության սահմանների երկայնքով կառուցված մեծ քանակությամբ «կաստելում»-ներ (“limes”-ներ) կային[78]: Օգոստոս Օգտավիանոսից մինչեւ Հուստինիանոսի ժամանակաշրջանի հռոմեական «լիմեսներն» արեւելքում տարածված էին Սեւ ծովի (որն օղակված էր «լիմեսներով») արեւելյան եւ հարավային ափերից, Միջերկրականի արեւելյան ափերով մինչեւ Տիգրիս: Ի տարբերություն մայրաքաղաք Artaxata-ի՝ Վ. Վագների կազմած քարտեզում նշված Կայնեպոլիսը ցույց է տրված ոչ թե մայրաքաղաք, այլ ամրոց («կաստել») եւ քաղաք[79]:

Գրավոր աղբյուրների եւ հնագիտական հետախուզական աշխատանքների հիման վրա փորձ է արվել վերականգնել Վաղարշապատի տեղադրությունը, քաղաքաշինության սկզբունքները: Ենթադրվում է, որ, ինչպես մյուս քաղաքները, Վաղարշապատը եւս ունեցել է միջնաբերդ, քաղաքային տարածք եւ գյուղատնտեսական գոտի: Միջնաբերդը զբաղեցրել է ներկայիս Էջմիածնի վանքի պարսպապատ տարածքը[80], այսինքն՝ եղել է ուղղանկյուն: Ենթադրվում է, որ միջնաբերդի մաս է կազմել նաեւ Էջմիածնի քաղաքային այգու տարածքը[81]: Հռոմեական ամրությունը՝ «կաստելը», փաստորեն, ծառայել է որպես միջնաբերդ: Այստեղ են կառուցվել պալատական վարչական շենքերը՝ իրենց ենթակառուցվածքներով: Մայր աթոռի պարսպապատ տարածքում շի-

76 Տե՛ս անդ, էջ 108-111, տախտ. I, II, 1, 4, 8, III, 3-6, 9:

77 **Von Jörg Wagner**, Die Römer an Euphrat und Tigris.-Antike Welt. Zeitschrift für Archäologie und Kulturgeschichte, 16 Jahrgang, 1985, Sondernummer, Abb. 22.

78 ВИА, էջ 509, “Словарь античности”, М., 1989, էջ 253:

79 **Von Jurg Wagner**, նշվ. աշխ., նկ. 1, 18, 49:

80 Տե՛ս **Ա. Քալանթար**, նշվ. աշխ., էջ 53, 54. **Ա. Սահինյան,** Նոր նյութեր Էջմիածնի Մայր տաճարի կառուցվածքի վերաբերյալ, «Էջմիածին», 1956, թ. 8-9, 11, էջ 60-69. **Հ. Սաինյան**, Новые данные об архитектурном облике Эчмиадзинского собора,XXV Международный конгресс востоковедов, доклады делегаций СССР. М., 1960, նույնի՝ Էջմիածնի Մայր տաճարի ճարտարապետական կերպարը, «Էջմիածին», 1961, թ. 1, էջ 43-63. **Գ. Տիրացյան,** К вопросу о градостроительной структуре и топографии древнего Валаршапата, ИФЖ, 1977, թ. 2, էջ 81-82. նույնի՝ Վաղարշապատ, Հայկական ճարտարապետության պատմություն, հ. I, Երեւան, 1996, էջ 229-233:

81 Տե՛ս **Ս. Սարդարյան**, նշվ. աշխ., էջ 54:

նարարական աշխատանքների միջոցին հայտնաբերվել են շինությունների եւ սալահատակի մարմարե քարեր, թրծած աղյուսե, կրաշաղախով կառուցված հին շենքի մնացորդներ, այդ թվում բազմերանգ մանրաքարերով ծածկված հատակ (խճանկար)[82]: Ընդ որում, ուշագրավ է հատկապես 1931 թ. Էջմիածնի տպարանի արեւմտյան կողմում բացված անտիկ բաղնիքը (II դ.), որը եւս մի անգամ հավաստում է, որ այս հատվածում է եղել հռոմեական ամրություն-զորակայանը՝ միջնաբերդով եւ պալատական-վարչական համակառույցներով: Ցավոք, այդ կառույցի ինչ լինելը իր ժամանակին չի ընկալվել, այն համարվել է արհեստանոց եւ լրիվ չի բացվել:

Միայն Գառնիի բաղնիքի նյութերի հրատարակումից հետո է պարզվել դրա բաղնիք լինելը, երբ նշանավոր հնագետ, Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Կարո Ղաֆադարյանը թանգարանի արխիվում պահվող սեւանկարների մեջ ճանաչել է այն[83]: Բաղնիքը բաղկացած է եղել երկու սենյակից (հնարավոր է՝ ավելի), որոնց միջնապատը շարված է կավե թրծած ուղղանկյուն աղյուսներով: Սենյակների ուղղությունը արեւելք - արեւմուտք է: Ենթադրվում է, որ տաք ծուխը սենյակից սենյակ է անցել վերոհիշյալ աղյուսներով շարված, երկու ցածր որմերով կազմավորվող առվակով[84]: Մինչդեռ դրանք ծառայել են վրան դրված կաթսայի ջուրը տաքացնելու համար: Ուղղանկյուն եւ քառակուսի թրծած աղյուսներից պատրաստված այդօրինակ ցածր որմեր բացվել են Արտաշատի հասարակական բաղնիքի սենյակներում (II դարի վերջ - III դարի սկիզբ): Դրանց դիմացի պատին պետք է լիներ նաեւ կամարաձեւ բացվածքով հնոց (սենյակներ I, IV, VI, VIII, IX)[85]: Կավե թրծած ուղղանկյուն եւ քառակուսի 4-5 սմ հաստության աղյուսների կիրառությունը բաղնիքների պատերի եւ հիպոկաուստի (կրկնակի հատակ) սյուների կառուցապատման համար Հայաստանում սկսում է կիրառվել II դարից: Այդ են վկայում Արտաշատի հասարակական բաղնիքի եւ ութերորդ բլուրում բացված մասնավոր բաղնիքների պատերն ու կրկնակի հատակի սյուները, երկու հատակների միջ՝ պատերի ներքին մասում թողնված կամարներով կրակարանները, գինի ստանալու ավազանը, սենյակների հատակները: Նույն եղանակով են պատրաստված նաեւ Գառնիի պալատական շենքը եւ բաղնիքը[86]:

82 Տե՛ս անդ, **Յովհաննես Շահխաթունյանց,** Ստորագրություն հինգ գավառացն Արարատայ, «Էջմիածին», 1842, Ա., էջ 77-81, **Ղ. Ալիշան,** Այրարատ, Վենետիկ, 1880, էջ 203-209.**Ա. Մխիթարյան,** Վաղարշապատ. քաղաքամայր Հայաստանի, հ. Ա.,Վաղարշապատ, 1874, էջ 54-61, 64. **Մ. Թաղիադյան,** Ճանապարհորդություն ի Հայս, Գրական ժառանգություն, հ. 9, Երեւան, 1975, էջ 39. **Г. Тирацян**, նշվ. աշխ., էջ 83:

83 Տե՛ս **Г. Тирацян,** նշվ. աշխ., էջ 85-86, ծան. 16. **Ս. Սարդարյան**. նշվ. աշխ., էջ 54. **Ж. Хачатрян, А. В. Тоникян,** նշվ. աշխ., էջ 149, 150:

84 Տե՛ս **Г. Тирацян**, նշվ. աշխ., էջ 86:

85 Տե՛ս **Ժ. Խաչատրյան**. Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից, «Էջմիածին», 2007, Ա., էջ 37:

86 Տե՛ս **Ժ. Խաչատրյան, Ա. Կանեցյան**, նշվ. աշխ., նկ. 2, 3, **Ժ. Խաչատրյան**, Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից, էջ 36-37. **Ժ. Խաչատրյան,** Արտաշատից հայտնաբերված լատիներեն

Շինարարական այդ տեխնիկան բնորոշ էր Հռոմի եւ կայսրության արեւմտյան ու արեւելյան երկրներում հռոմեական կայազորերի կառուցած շինություններին[87]: Հիպոկաուստի սյուները գլանաձեւ, երկու ծայրերը լայնացող կավե խողովակներ են, որոնց մակերեսը էդուրգի անիվի պտույտներից առաջացած հորիզոնական առվակոսներով է ծածկված: Դրանք հենված են թրծած քառակուսի աղյուսների վրա եւ իրարից հավասար հեռավորություն ունեն: Հար եւ նման խողովակ է հայտնաբերվել Արտաշատի հասարակական բաղնիքի երկրորդ սենյակի հարավարեւմտյան անկյունում, որի ներքին կեսը, Վաղարշապատի խողովակների նման, լցված էր կրաշաղախով եւ ուներ օվալաձեւ անցքեր՝ տաք ծուխը ներս թափանցելու համար[88]: Նման կավե խողովակներ է ունեցել Ղրիմի հարավում՝ Տավրիկյան բարձունքի վրա գտնվող հռոմեական ամրոցի՝ Խարակսի բաղնիքը (II դ.), որտեղ կանգնած է եղել իտալիկների առաջին լեգեոնը:

Այստեղի քառակուսի աղյուսները մի կողմում ունեն անկյուններով տարված խաչաձեւ ակոս՝ շաղախը կպչուն դարձնելու համար: Նրանք նույնպես դրոշմել են իրենց արտադրանքը: Բացվել է ջրատար խողովակաշարը եւ աղյուսաշար կամարով անցքը[89]: Համանման մանրամասներով են օժտված նաեւ Միլեթի[90] ու Պլովդիվի (Բուլղարիա)[91]բաղնիքները:

Ուշագրավ են Վաղարշապատի դրամական գտածոները: Քաղաքի հարավային պարսպից ոչ հեռու՝ Իգդիր տանող խճուղու ձախ կողմում, հայտնաբերվել է հին դրամների հավաքածու: Հարավարեւմտյան կողմում Ս. Սարդարյանը գտել է Սեպտիմիոս Սեւերոսի դրամներ[92]: Ագաթանգեղոսի վկայություններից հասկանում ենք, թե որոնք են քաղաքի պարսպի հյուսիսային, հարավային եւ արեւելյան սահմանները: Հյուսիսային ու հարավային սահմաններն ընդգրկել են Հռիփսիմե եկեղեցու բարձունքից մինչեւ Գայանե եկեղեցու միջեւ ընկած տարածքը: Արեւելյանը հասել է գրեթե Արտաշատ տանող պողոտային. «Եւ ընթացեալ ընդ քաղաքամէջսն՝ ելանէր ընդ արեւելս կոյս, ընդ Արեգ դուռն քաղաքին: Երթեալ առ հնձանօքն, ուր էին իսկ յառաջ վանք իւրեանց՝ ձայն աւետեաց մատուցանէր ընկերացն. եւ ինքն անցանէր հարուստ մի ի քաղաքէն ի կողմն մի հիւսիսոյ, ի տեղի մի յարեւելս կոյս, ի սարաւանդակ ի բարձրաւանդակ յաւազին տեղի մի, մօտ ի բուն պողոտայն,

արձանագրությամբ դրոշմված կղմինդրներ եւ աղյուսներ, էջ 230-235, նկ. 2-6:

87 Տե՛ս **В. Блаватский,** Харакс. Материалы и исследования по археологии СССР. М., 1951, էջ 250-254, նկ. 4, 5. **Г. Тирацян,** նշվ. աշխ., էջ 86, ծան. 17-20:

88 Տե՛ս **Ժ. Խաչատրյան,** Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից, էջ 36:

89 Տե՛ս **В. Блаватский,** նշվ. աշխ., նկ. 5, 1-5, 24, 2-4, 6:

90 Տե՛ս **Oya Kozaman,** Miletopolis-Hamam Kazisi 1975 rapori Türk Arkeoloji, sayi XXIV-1. Ankara, 1977, նկ 3-27:

91 Տե՛ս **Д. Цончев**. Новооткрыта римска баня в Пловдив, Годишник на Пловдивскат Народа библиотека и Музей, 1937-1939, София, 1940, էջ 141-144, նկ. 14, 15:

92 Տե՛ս **Ս. Սարդարյան**. նշվ. աշխ., էջ 53:

որ երթայր Արտաշատ քաղաք»[93]: Հայտնի են քաղաքի երկու դարպասները: Մեկը, ինչպես նշվեց, Արտաշատ տանող պողոտայի կողմում գտնվող Արեգ դուռն է, մյուսը՝ հարավայինը, որը տանում է դեպի Մեծամորի կամուրջը[94]:

Հիշատակվում են նաեւ քաղաքի փողոցները (§ 180, 192). «Արդ՝ իբրեւ եկն եմուտ նա ի ներքս՝ առ հասարակ մարդիկն, ոմանք արտաքոյ ապարանիցն, կէսքն ի փողոցս ի ներքսագոյնսն, առ հասարակ երգս առեալ բարբառեցան կայթիւք վազելով. ցոյց բարձեալ մարդկանն. կէսքն ի բերդամիջին, եւ կէսք զքաղաքամէջն լցին խնճոյիւք»[95]: Ակներեւաբար, պարիսպները քարե հիմքի վրա հում աղյուսով շարված պատեր են եղել: Մինչեւ 1945 թ. պահպանված են եղել հում աղյուսե լայն պատերի մնացորդներ[96]: Իգդիրի ճանապարհի աջ կողմից հայտնաբերված լատիներեն երկու արձանագրությունները դրված են եղել քաղաքի հարավային դռան վերեւում, իսկ Վաղարշապատի հին պարիսպների մնացորդները մինչեւ XIX դար նկատելի են եղել: Քաղաքի պարիսպների շուրջը եղել է խրամ եւ պատվար, որը շատ կարեւոր էր պաշտպանության համար[97]: Ագաթանգեղոսը վկայում է, որ մահապարտներին սպանում էին «...ի տեղին յայն, ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս, ի ճահճախուտ տեղի մի, մօտ ի պարկէն փոսին որ շուրջ գայր զքաղաքաւն»[98]: Ենթադրվում է, որ քաղաքի պարիսպը եղել է կլորավուն, ինչպես պարթեւական եւ սասանյան դարաշրջանի Միջագետքի, Իրանի ու Միջին Ասիայի հարթավայրային քաղաքների եւ կենտրոնների պարիսպները[99]: Քաղաքի պարիսպները կառուցապատելիս առաջին հերթին հաշվի էր առնվում տեղանքը: Հայաստանում՝ Մեծ եւ Փոքր Հայքում, կառուցված մեզ հայտնի հռոմեական ամրություններից Սատաղի եւ Մելիտենեի «լիմեսները» կայսրության համար ամենախոշորներն ու ամենակարեւորներն էին: Դրանք արեւմուտք-արեւելք (Փոքր Ասիա-Հայաստան) եւ հյուսիս-հարավ (Տրապիզոն-Սամոսատ) տանող ստրատեգիական ու առեւտրական ճանապարհների հանգուցակետերն էին[100]: Ուստի, Մելիտենեի (Էսկի Մալաթիա) եւ Սատաղի (Սատալա) «լիմեսներն» աստիճանաբար մեծացել ու վերածվել էին քաղաքների: Այդ երեւույթը բնորոշ էր գրեթե բոլոր «լիմեսներին», այդ թվում նաեւ Կայնեպոլիսին:

93 **Ագաթանգեղոս**, § 192:

94 Անդ, § 206:

95 Անդ, § 180:

96 Տե՛ս **Ս. Սարդարյան**, նշվ. աշխ., էջ 55:

97 Տե՛ս **Պրոկոպիոս Կեսարացի**, թարգմանությունը բնագրից, առաջաբան եւ ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին», 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա., Երեւան, 1967, էջ 196:

98 **Ագաթանգեղոս**, §206.

99 Տե՛ս **Տիրացյան**, Վաղարշապատ, էջ 230:

100 Տե՛ս **T. Mitford,** Biliotti's Excavations at Satala.- Anatolian Studies (AS), vol. XXIV, 1974, fig. 14, 15. **Հ. Հակոբյան,** Հայաստանի առեւտրական առնչությունները հարեւան երկրների հետ (I-III դդ.), ԼՀԳ, 1984, թ. 2, էջ *68:*

Համեմատաբար ավելի շատ տեղեկություններ ունենք Սատաղի մասին: Այն գտնվում էր Եփրատի հյուսիսարեւելյան հատվածում: Ուղղանկյուն ճամբարը կառուցված է եղել բլրի գագաթի հարթության վրա (բարձր. 90 մ)[101]: Այստեղից հայտնաբերվել են ճարտարապետական հիանալի մշակված մանրամասներ, Աֆրոդիտեի բրոնզե արձանի գլուխը[102] եւ ձախ ձեռքը, ձիու ոտք, որը պատկանել է հեծյալի արձանի, Վիկտորիայի բարձրաքանդակը, դորիական տաճարի ծոփորի մասեր եւ այլն[103]: Հետաքրքիր են Մելիտենեի եւ Սատաղի բաղնիքները: Առաջինի մասին վկայում է Պրոկոպիոս Կեսարացին[104]:

Սատաղի բաղնիքը վերածված է եղել թոնրատան[105]: Այն ունեցել է հիպոկաուստ եւ վերին հատակը պատած է եղել գեղեցիկ խճանկարով[106]՝ ոլորազարդերով ու սաղարթազարդերով, մարդկային դեմքով եւ այլն: Այսպիսով՝ Սատաղը, ըստ նկարագրության եւ հայտնաբերված նյութերի, շատ ընդհանրություններ ունի Կայնեպոլիս-Նոր քաղաք-Վաղարշապատի հետ: Ինչպես վերն ասվեց, ճիշտ է Մոմզենը, երբ կարծում է, թե Վաղարշապատը հիմնադրվել է 163 թ. Ստատիոս Պրիսկոսի կողմից[107]: Այն դարձել է Մեծ Հայքի նոր մայրաքաղաքը, եւ այնտեղ է տեղափոխվել արքունիքը, Սոհեմոսի նստավայրը: Մի շարք ուսումնասիրողներ եւս պաշտպանում են Մոմզենի տեսակետը[108]: Հռոմեական կայազորը 30 տարի կառուցել է մայրաքաղաքին բնորոշ բոլոր շինությունները՝ ամրոցի պարիսպները, որոնք դարձան քաղաքի միջնաբերդը, պալատական, վարչական համակառույցները, տաճարները՝ Անահիտ-Արտեմիսինը՝ միջնաբերդում, որի մասին վկայում է Խորենացու հիշատակած Վաղարշապատում եղած Արտիմեդ դիցուհու անունը, մյուսը՝ Ապոլոն-Միհրի տաճարը քաղաքից դուրս (ինչպես Արտաշատում)՝ Հռիփսիմե եկեղեցու հատվածում: Արդ, թե ինչպես էին նման քաղաքները կառուցապատվում, հաղորդում է Պրոկոպիոս Կեսարացին. «Հնում Փոքր Հայք կոչված

101 Տե՛ս **T. Mitfor,** նշվ. աշխ., էջ 225, նկ. 9, 14:

102 Տե՛ս անդ, էջ 236, ծան. 15: Միտֆորտը, հիմք ընդունելով շերտը, որի մեջ հայտնաբերվել է Աֆրոդիտեի արձանի գլուխը, համարում է, որ դա կարող է լինել ուշ հելլենիստական կամ վաղ հռոմեական շրջանի: Դոկ. Հիգինսը կարծում է, որ այն հունական կամ ուշ հելլենիստական է (մ. թ. ա.150 թ.) կամ հռոմեական ընդօրինակություն է: Համենայն դեպս Աֆրոդիտեի արձանը ոչ մի առնչություն չունի Երիզայի Անահիտ աստվածուհու նշանավոր տաճարի եւ արձանի հետ: Սատաղի արձանը այնտեղից չի բերված: Ամենայն հավանականությամբ, այն Պոնտոսից է ներմուծված: Սատաղը գտնվում է Երիզայից 10 կմ հեռու:

103 Տե՛ս **T. Mitford**, նշվ. աշխ., էջ 221-225, 236, նկ. 1-6:

104 Տե՛ս **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 195:

105 Տե՛ս **T. Mitford**, նշվ. աշխ., էջ 226, 235, նկ. 12. **Հ. Հակոբյան**, Մեծ ու Փոքր Հայքերի..., էջ 152, 153:

106 Տե՛ս «Ուղեւորություն հնախոսական հետազոտություն ի Պոնտոս եւ ի Փոքր Հայս Փր. եւ Եվգ. Կյումոն եղբարց», Պոնտական ուսումնասիրությունք, մասն Բ., թարգմանեց Հակոբոս Տաշչյան, Վիեննա, 1919, էջ 359-372:

107 Տե՛ս **Т. Моммзен**, նշվ. աշխ., էջ 367, ծան. 1,2, ՀԺՊ, հ. I, էջ 789, ծան. 54. **Ս. Կրկյաշարյան,** Հին Հայաստանի եւ Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երեւան, 1970, էջ 120:

108 Տե՛ս **Манандян,** նշվ. աշխ., էջ 114, ծան. 4. **Г. Халатянц**, Очерки истории Армении, М., 1910, էջ 311. **Y. Sandalgian**, Histoire documentaire de l'Armenie des ages du paganisme (1410ab.-305 apr. y.c), h. II. Rome, 1917, էջ 558. **Fr. Tournebize**, Histoire politigue et reliqiuse de l'Armenie. Paris, 1900, էջ 411:

(երկրում)՝ Եփրատ գետից ոչ շատ հեռու, գտնվում էր մի վայր, ուր հաստատվել էր հռոմեական զորագունդը: Վայրը կոչվում էր Մելիտենե, զորագունդը՝ լեգեոն: Հռոմեացիները հնում այստեղ ցածրադիր վայրում կառուցել էին քառակուսի ամրություն, որը զինվորների համար ուներ բավականաչափ զորանոցներ: Նրանք այնտեղ էին պահում նաեւ իրենց դրոշները: Այնուհետեւ հռոմեացիների կայսր Տրայանոսի հրովարտակով վայրն ստացավ քաղաքի իրավունք եւ դարձավ շրջանի մայրաքաղաքը: Ժամանակի ընթացքում Մելիտենե քաղաքը մեծացավ եւ մարդաշատ դարձավ: Երբ ամրությունից ներս այլեւս տեղ չմնաց բնակվելու (ինչպես ես ասացի տարածությունը շատ փոքր էր), հաստատվեցին [քաղաքի] շրջակայքում, ուր եւ եկեղեցիներ, վարչական շենքեր, հրապարակ, խանութներ կառուցեցին, սյունաշարքեր, բաղնիքներ, թատրոն, (անցկացրին) քաղաքային փողոցներ եւ ինչ որ անհրաժեշտ է մի մեծ քաղաք զարդարելու համար: Սակայն դրա հետեւանքով Մելիտենեի մեծ մասը քաղաքի սահմաններից դուրս եկավ: Ձեռնարկվեց ամբողջ քաղաքի պարսպապատումը, սակայն նա իր ծրագիրը չիրականացրած վախճանվեց: Հուստինիանոս կայսրն ամեն կողմից պարիսպներով շրջափակելով այն, Մելիտենեն դարձրեց Հայոց հզոր ամրություն եւ զարդ»[109]:

Ինչպե՞ս է, որ Սոհեմոսից հետո գահակալեց Վաղարշ Երկրորդը (192/193-211թթ.) [110], եւ ե՞րբ է քաղաքը Վաղարշապատ կոչվել: Հարցեր, որոնք մեկնաբանման կարիք ունեն: Անկախ նրանից՝ Վաղարշ Երկրորդը պարթեւների դրածոն էր, թե ոչ, կամ Վաղարշ Առաջինի թո՞ռն էր, թե՞ եղբորորդին[111], միեւնույն է՝ նա Արշակունի էր: Մինչեւ 192-ի ավարտը կամ 193-ի սկիզբը հռոմեական կայազորը կանգնած էր Կայնեպոլիսում: 177 թ. քվադների եւ մարկոմանների հետ Հռոմը պատերազմի մեջ էր: Մարկոս Ավրելիոսին փոխարինած Կոմմոդոսը հաշտություն կնքեց՝ հրաժարվելով նոր տարածքների նվաճումներից[112]: Կոմմոդոսի մահից (192 թ.) հետո՝ 193 թ., հռոմեական զորքերը, անկասկած, հեռացել էին Հայաստանից Կապադովկիայի իրենց մշտական զորակայանը, իսկ Հռոմում դեռեւս նոր կայսր չկար: Վաղարշ Երկրորդը, օգտվելով դրանից իբրեւ Հայաստանի գահի օրինական հավակնորդ, գրավել է այն եւ Կայնեպոլիս-Նոր քաղաքն անվանակոչել իր անունով (193-211 թթ.): Այդ է վկայում այն իրողությունը, որ Նիգերն օգնության խնդրանքով դիմել է Վաղարշ Երկրորդին եւ մերժում ստացել: Իսկ Սեպտիմիոս Սեւերոսը, Արեւելք գալով մինչեւ Նիգերի դեմ արշավելը, թիկունքն ապահովելու նպատակով մտել է Հայաստան:

Կոմմոդոսը Անտոնինոսների դինաստիայի վերջին ներկայացուցիչն էր:

---

109 **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 195, 196:

110 ՀԺՊ, հ. I, էջ 789:

111 Անդ:

112 Տե՛ս **Ն. Ա. Մաշկին**, Հին Հռոմի պատմություն (թարգմ.՝ Եվգ. Ա. Միրզախանյանի, խմբագրեց՝ Ստ. Ա. Ներսիսյանը), Երեւան, 1951, էջ 680, 681:

Նրա մահից հետո նախ կայսր հռչակվեց Պերտինաքսը (193 թ.), այնուհետեւ՝ Դիդիոս Յուլիանոսը (193 թ.): Երկուսի կյանքն էլ կարճատեւ եղավ, սպանվեցին: Պրովինցիաներում գտնվող լեգեոնները միաժամանակ երեք կայսր հռչակեցին. Բրիտանիայում՝ Դեցիմուս Կլոդիոս Ալբինոսին (193-197 թթ.), Պանոնիայում՝ Լուցիոս Սեպտիմիոս Սեւերոսին (193-211 թթ.), Սիրիայում՝ լեգատ Գայոս Պեսցեննիոս Նիգերին (193-194 թթ.): Սեպտիմիոս Սեւերոսը[113], որն ավելի մոտ էր Հռոմին, արագ գրավեց քաղաքը: Սենատորներին զանազան խոստումներ տվեց, Ալբինոսի հետ համաձայնություն կնքեց, որդեգրեց ու կեսարի տիտղոս շնորհեց: Հռոմից ոչ հեռու մի նոր լեգեոն տեղավորեց[114] եւ թիկունքն ապահովելուց հետո շտապեց Արեւելք: Այստեղ Նիգերին իբրեւ հռոմեական կայսր էին ճանաչել եւ նրա խնդրանքով օգնել էին պարթեւների թագավոր Վաղարշ Չորրորդը (191-208 թթ.), Օսրոյենե-Եդեսիայի թագավոր Աբգար Իններորդը եւ Հադրայի թագավոր Բարսեմիոսը: Նիգերը 194 թ. պարտություն կրեց Կիլիկիայում՝ Իսոսի մոտ, եւ սպանվեց: Նիգերին աջակցած քաղաքներն ավերվեցին (Անտիոք, Բյուզանդիոն): Սեւերոսը 195 թ. արշավեց պարթեւների դեմ, նվաճեց Հյուսիսային Միջագետքը, Մծբինը (196 թ.) վերածեց գաղութի[115]: Հ. Մանանդյանը, հենվելով հույն պատմաբան Հերոդիանոսի (170-241 թթ.) հաղորդման վրա, գտնում է, որ Նիգերը օգնության համար դիմել է նաեւ Մեծ Հայքի թագավոր Վաղարշ Երկրորդին, սակայն նա չեզոք է մնացել ու հրաժարվել է օգնել[116]: Ըստ Հերոդիանոսի[117]՝ «Նիգերը մարդ ուղարկեց Պարթեւաց, Հայոց եւ Հադրացոց թագավորների մոտ՝ նրանցից խնդրելու օգնություն: Արդ՝ հայոց թագավորը պատասխանեց, որ նա ոչ ոքի չի օգնելու, սակայն եթե Սեւերոսն իր վրա հարձակվելու լինի՝ ինքը պատրաստ է իր երկիրը պաշտպանել... Արդ՝ պատրվակ բռնելով, որ Հադրացոց Բարսեմիոս թագավորը դաշնակից է եղել Նիգերին՝ նա [Սեւերոսը] արշավեց Արեւելք: Գալով այստեղ՝ նա ուզեց ներխուժել Հայաստան: Բայց Հայոց թագավորը շտապեց թախանձանքով կանխել այդ եւ ուղարկեց նրան դրամ, նվերներ ու պատանդներ, խոստանալով նրան զինակցություն ու բարեկամություն: Եւ Սեւերոսը, երբ հայկական գործերը հաջողվեցին ըստ իր ցանկության, առաջ շարժվեց Հադրացոց դեմ»[118]: Ճիշտ է Հ. Մանանդյանը,

113 Սեպտիմիոս Սեւերոսը ծնվել է Հյուսիսային Աֆրիկայի Մեծ Լեպսիս քաղաքում, ռոմանականացած պունիկյան (poeni-փյունիկացու) ընտանիքում: Նա բավականաչափ կրթված, եռանդուն զորավար եւ վարչագետ էր: Սեւերոսը "первый из так называемых солдатских императоров..." տե՛ս "Словарь античности", էջ 471, 519:

114 Տե՛ս **Ն. Ա. Մաշկին**, նշվ. աշխ., էջ 768:

115 Տե՛ս անդ,:

116 Տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. II, Ա. մաս. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երեւան, 1978, էջ 56:

117 Տե՛ս **Ն. Ա. Մաշկին**, նշվ. աշխ., էջ 768:

118 **Herodianus,** Ab excessu D. Marci libri VII, ed. K. Stavenhagen, Leipsiae, 1922, III, 1, 2, 9, 2. Օգտվել ենք Հ. Մանանդյանի թարգմանությունից. տե՛ս **Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն**, նշվ. աշխ., էջ 56, 57:

երբ գրում է, որ Վաղարշ Երկրորդը չեզոքություն է պահպանել, սակայն անհավանական է Հերոդիանոսի պատմությունը, որը վերաբերում է Վաղարշ Երկրորդին վերագրվող մտքերին: Բնականաբար, հռոմեական զորքերը 193 թ. գահակալական կռիվների ժամանակ պետք է հեռանային Հայաստանից Կապադովկիա՝ իրենց հիմնական զորակայանը: Վաղարշը չէր կարող գուշակել, թե ինչ ավարտ կունենա Սեպտիմիոս Սեւերոսի եւ Նիգերի պայքարը: Նման մտքերի տերը Սեւերոսին թախանձանքով չէր դիմի, նվերներ ու պատանդներ չէր ուղարկի եւ զինակցություն ու բարեկամություն չէր խոստանա: Ենթադրվում է, որ Սեւերոսը եւ Վաղարշ Երկրորդը հանդիպել են Խարբերդի դաշտում: Համաձայնություն է կայացվել երկու երկրների միջեւ: Ենթադրվում է նաեւ, որ հիմք է ընդունվել մ. թ.ա. 66 թ. Արտաշատի եւ մ. թ. 63 թ. Հռանդեայի պայմանագրերը[119]: Իրողությունը քիչ հավանական է, քանի որ այդ պայմանագրերով հռոմեական կայազորներ Հայաստանում չեն տեղակայվել:

Այժմ այլ էին պայմանները: Հռոմեական կայսրությունը երկրորդ դարում հասել էր իր զարգացման գագաթնակետին: Imperium Romanum-ը ստանում է Հռոմեական կայսրության համբավ, միաժամանակ Orbis terrarum (տիեզերք) հասկացության հոմանիշ[120]: Պարթեւստանը թուլացել էր եւ չէր կարող նախկինի նման միջամտել Հայաստանին վերաբերող խնդիրներին: Ինչպես տեսանք, 163-193 թթ. Հայաստանի ստրատեգիական նշանակություն ունեցող վայրերում հռոմեական կայազորեր էին կայանել: Պարզվում է, որ Սեւերոսը ներխուժել է Հայաստան եւ Վաղարշ Երկրորդի հետ հանդիպումը տեղի է ունեցել, ամենայն հավանականությամբ, Վաղարշապատում կամ վերականգնված Արտաշատում: Ըստ որում, պայմաններ թելադրողը Սեւերոսը պետք է լիներ: Նա համառ էր եւ դաժան[121]: Ընդունելով Վաղարշ Երկրորդի առաջարկները՝ նա համաձայնել է, որ Վաղարշը շարունակի թագավորել Հայաստանում, նրա վրա է դրվել նաեւ կովկասյան լեռնանցքների պահպանության խնդիրը եւ այլն[122]: Հայաստանը, ինչպես մինչ այդ, շարունակում է գտնվել կապադովկյան զինվորական համակարգի մեջ ու վերստին հռոմեական կայազոր է տեղակայվում Վաղարշապատում, Արտաշատում, եւ, հավանաբար, այլ վայրերում: Փաստորեն, Հայաստանը կրկին կախման մեջ է ընկնում Հռոմեական կայսրությունից[123]: Հռոմում 196 թ. Ալբինոսի կողմից գահի շուրջ սանձազերծված պատերազմի պատճառով Սեւերոսը ստիպված մեկնում է Արեւմուտք: Պատերազմը հաղթանակով ավարտելով 197 թ.՝ Սեւերոսը կրկին շտապում

119 Տե՛ս **Ս. Տ. Երեմյան**, Վաղարշ II-ի քաղաքական հարաբերությունները Հռոմի եւ Պարթեւների հետ, ՊԲՀ, 1976, թ. 4, էջ 40, 41:

120 Տե՛ս **Ն. Ա. Մաշկին,** նշվ. աշխ., էջ 682:

121 Տե՛ս **Е. Фролова**, Императорский Рим в лицах.- "Слово", 2002, էջ 208.

122 Տե՛ս **Ս. Տ. Երեմյան**, Վաղարշ II-ի քաղաքական հարաբերությունները..., էջ 43:

123 Տե՛ս **Ն. Ա. Մաշկինի** նշված աշխատանքի հավելվածի քարտեզներում (II դ.) Հռոմեական կայսրության սահմանների մեջ է մտնում նաեւ Հայաստանը:

է Արեւելք, որտեղ պարթեւական թագավոր Վաղարշ Չորրորդը, օգտվելով Սեւերոսի բացակայությունից, վերանվաճել ու ավերել էր Միջագետքը, հարձակվել Հայաստանի եւ Սիրիայի վրա, պաշարել Մծբինը[124]: Սեւերոսը, գալով Ասորիք, արշավում է Միջագետք: Պատերազմը տեւում է մինչեւ 199 թվականը: Ազատագրում է Մծբինը, ծանր պարտության է մատնում պարթեւական զորքերին, գրավում է Սելեւկիան եւ Տիզբոնը: Սեպտիմիոս Սեւերոսի եւ Վաղարշ Չորրորդի միջեւ հաշտություն է կնքվում: Հռոմեացիները ստանում են Միջագետքը, որը վերածվում է պրովինցիայի: Հռոմեական կայսրության սահմաններն ընդարձակվում են մինչեւ Տիգրիս[125]: Արտաշատում հռոմեական կայազորը տեղակայվել է քաղաքի հարավարեւմտյան մասում՝ Արաքսի ձախ ափից շուրջ 70 մ հեռավորության վրա գտնվող բլրակի հարեւանությամբ, որտեղ Ապոլոն- Տիրի տաճարն էր: Վերջինիս առաջին դարի 60-ական թվականների հարթակի որմի հարավարեւելյան հատվածում զինվորները կառուցել են հասարակական բաղնիք, որը բաղկացած է տասը սենյակից, եւ այլն[126]:

Վաղարշ Երկրորդին հաջորդած Խոսրով Առաջինի (211-216 թթ.) օրոք[127] Հայաստանը գտնվել է քաղաքական նույն վիճակում[128]. Հայաստանին կցված հռոմեական կայազորները մնում էին: Հայերի դարձի ավանդական պատմությունը կապվում է Հայաստանի գլխավոր մայրաքաղաք Արտաշատի եւ Վաղարշապատի հետ: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո (314թ.)[129] Վաղարշապատում հիմնադրվում է Էջմիածնի տաճարը: Շապուհ Երկրորդը երկարատեւ պաշարումից հետո 369 թ. գրավում, թալանում է Արտագերսը, այնուհետեւ ավերում է Մեծ Հայքի քաղաքները[130]: Բնականաբար, առաջինն ավերում է Արտաշատ եւ Վաղարշապատ մայրաքաղաքները: «Այնուհետեւ եկան Արտաշատ մեծ քաղաք. նրան առան, պարիսպները կործանեցին. այնտեղ էլ պահված գանձերը առան եւ ամբողջ քաղաքը գերեվարեցին: Արտաշատ քաղաքից գերի տարան ինը հազար տուն հրեա[131], որոնց Արշակունի Տիգրան թագավորը գերի էր բերել Պաղեստինացոց աշխարհից, եւ ընդ որում քառասուն հազար տուն հայ: (Այսքան մարդ) Արտաշատ քաղաքից տարան: Քաղաքի շինություններից փայտաշենները կրակ տվին այրեցին, քա-

124 Տե՛ս **Ն. Ա. Մաշկին**, նշվ. աշխ., էջ 773:

125 Տե՛ս անդ:

126 Տե՛ս **Ժ. Խաչատրյան, Ա. Կանեցյան,** Արտաշատի 2005-2006 թթ. պեղումների արդյունքները, Հին Հայաստանի մշակույթը, XIV, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երեւան, 2008, էջ 222-227, աղ. II-X. **Ժ. Խաչատրյան,** Նորահայտ մոնումենտալ շինություններ Արտաշատից, էջ 34-37. նույնի՝ Արտաշատի «Երազամոյն» վայրի տաճարը եւ կից համալիրները, ՊԲՀ, 2009, թ.*1*, էջ 122-134, աղ. I-IV:

127 Տե՛ս **Բ. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 123:

128 Տե՛ս ՀԺՊ, հ. I, էջ 792. **Ս. Տ. Երեմյան,** Վաղարշ II-ի քաղաքական հարաբերությունները..., էջ 47:

129 Տե՛ս **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 131. **Գ. Սարգսյան,** Ֆեոդալական հասարակարգի հաստատումը Հայաստանում եւ հին հայկական պետության անկումը, ՊԲՀ, 1972, թ. 2, էջ 223:

130 ՀԺՊ, հ. I, էջ 99-101:

131 Դրանք հրեական կրոնի հետեւորդներ են. տե՛ս **Р. Манасерян**, К вопросу вероисповеданий населения городов Армении (Iв. до н. э.- IV в. н. э.), ИФЖ, 1989, թ. 2, էջ 198-204:

ռաշենները քանդեցին, նույնպես եւ պարիսպը. քաղաքի բոլոր շինվածքները հիմնահատակ կործանեցին, ոչ մի քար քարի վրա չթողին, քաղաքը բնակիչներից թափուր, անմարդի, ավերակ դարձրին: Առնում էին Վաղարշապատ քաղաքն էլ քանդում, բրում էին, հիմքից կործանում էին, այս քաղաքից էլ գերի էին տանում տասնեւինը հազար տուն: Ամբողջ քաղաքում շենք չթողին, բոլորը քարուքանդ էին անում, կործանում»[132]:

Չնայած ավերածություններին եւ բնակչության գերեվարությանը՝ Վաղարշապատը վերականգնվում է (թերեւս, աննշան չափերով) եւ մինչեւ 387 թ.՝ Մեծ Հայքի բաժանումը Պարսկաստանի եւ Բյուզանդիայի միջեւ ու դրանից հետո, շարունակում է մնալ պարսկական մասի մայրաքաղաքը: Չմոռանանք նաեւ, որ Մեսրոպ Մաշտոցը գրերի գյուտից հետո, երբ Ասորիքից վերադարձավ Հայաստան եւ մոտեցավ Արտաշատ մայրաքաղաքին, Վռամշապուհ թագավորը նախարարների հետ նրան դիմավորեց Արաքսի ափին՝ Տափերական կամրջի մոտ, որից հետո ուրախության ձայներով, հոգեւոր երգերով եւ օրհնություններով վերադարձան մայրաքաղաք Վաղարշապատ ու մեծ տոնախմբություն կազմակերպեցին[133]:

Այսինքն՝ մինչեւ Դվինի՝ մարզպանական Հայաստանի կենտրոն լինելը՝ Վահան Մամիկոնյանի մարզպան դառնալուց հետո, Վաղարշապատը կատարել է մայրաքաղաքի եւ կրոնական կենտրոնի դերը: Արտաշատը մնացել է իբրեւ Հայաստանի հզորության խորհրդանիշ: Այդ են վկայում Ե. դ. կեսերի դեպքերը եւ, ինչպես վերջին տարիների պեղումներն են հավաստում, շարունակում էր կատարել միջազգային առեւտրական կենտրոնի իր դերը՝ որպես միջանկյալ կայան[134]:

---

132 **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, թարգմ., ներած. եւ ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երեւան, 1947, IV, 55 (ԾԵ.):

133 Տե՛ս **Կորյուն**, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատասիրությամբ՝ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1994, էջ 91-92:

134 ՀԺՊ, հ. II, Երեւան, 1984, էջ 200. **Ժ. Խաչատրյան**, Արտաշատի «Երազամոյն» վայրի..., էջ 143-144:

РЕЗЮМЕ

У части арменоведов бытует мнение, что город Валаршапат основал Валарш I (117-140/143 гг.) и перенес туда царский двор. Теодор Момзен и некоторые другие исследователи, основываясь на сообщении Кассия Диона (LXXI, 3, 1), считают, что, после завоевания и разрушения столицы Армении-Арташата (163 г.), римский полководец Статий Приск построил крепость для римских легионеров, и объявил его Кайнеполисом, первым городом страны, т. е. столицей. Так как Арташат еще не был

восстановлен, то при царе Соэме, второй раз утвержденном на престоле Армении, Кайнеполь-Новый город стал его резиденцией. Римские войска в течение 30 лет (163-193) оставались в Кайнеполе-Новом городе и занимались строительством. Оно строили присущие столице сооружения-фортификационные, дворцовые с подсобными зданиями. Главный храм Анаит-Артемиса был построен в самой цитадели, а храм Аполлона-Митры за городом. Кайнеполь становится вторым после Арташата политическим и культовым центром Армении. После смерти Соэма, престол переходит к Валаршу (192/193-211 гг.) . В 193 г. римские войска покидают Армению, и Кайнеполь-Новый город переименовывается в Валаршапат, и несмотря на это, первоисточники продолжают параллельно употреблять старое название Кайнеполь и Новый город. Прокопий Кесарийский сообщает, о том, как римские стоянки войск «лимеси» преобразовываются в города. При Септими Севере в 194 г. в Валаршапате,

Арташате и в других стратегических центрах страны снова расположились римские гарнизоны.

Традиционная легенда становления христианства государственной религией в Армении связана с главной столицей Армении-Арташатом, как и с Валаршапатом. В Валаршапате основывается первый христианский храм Эчмиадзин. Несмотря на разрушения и пленение жителей Валаршапата Шапухом II в. 369 г. город продолжает оставаться политическим и культовым центром страны до становления Двина марзпанским центром. Находясь на международном торговом пути, город Арташат продолжал служить промежуточным торговым центром на дороге сначала к Валаршапату, затем и к Двину, что показывают раскопки последних лет.

SUMMARY

According to the version of a group of Armenologists the town of Valarshapat was founded by Valarsh I (117-140/143) and the capital of Armenia was removed

here. Nevertheless Theodor Mommsen and followers, based on Cassius Dio (LXXI, 3, 1), suppose that after the Roman general Statius Priscus took and destroyed Artashat in 163, he built a camp not far from the town and declared that it would be the new capital of Armenia Cainepolis. Cainepolis became the citadel and residence of the king as Artashat has not been restored at the time when Sohemus reigned once more. The Roman army stayed at Cainepolis - New Town for 30 years (163-193) making some building activities. They erected all the buildings characteristic for a capital: palace complexes with complicated infrastructure, temple of Anahit-Artemis inside the citadel and Apollo temple out of the town. Cainepolis became the second political and religious center after Artashat. Valarsh II (192/193-211) reigned after the death of Sohemus. Armenians renamed Cainepolis to Valarshapat, after the Romans left Armenia. However, Cainepolis was the parallel term to name the town. Procopius Caesarensis indicated the ways they built on towns. Since 194, during Septimius Severus new Roman garrisons occupied Valarshapat, Artashat and other important points in Armenia. The history of conversion Armenia into Christianity has connection with the main capital of Armenia Artashat and Valarshapat. After the rise of Christianity, the Echmiadzin cathedral emerged at Valarshapat. Despite the fact, that Shaper II destroyed the town in 369, and desolated this area, Valarshapat has been the capital and religious center of Armenia up to the declaration of, in 482 year Dvin as the marzpanian residence of the Sassanian Empire. As for Artashat, it continued to be intermediate trade centre first on the way to Valarshapat, later to Dvin. The excavations of the recent years approve it.